Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՌԱԿԱՅԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հեռակա ուսուցման ընդունելության համար պետք է ԳԹԿ «dimord.am» կայքում լրացնել դիմում-հայտ:

**Դիմում-հայտը լրացնելու համար անհրաժեշտ է՝**

ա) ունենալ ԳԹԿ անձնական համար

բ) ընդունելության յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար ԳԹԿ հաշվեհամարին **(900018003401)** փոխանցած 1500 դրամի անդորրագիրը:

Մասնաճյուղի դիմորդներին ԳԹԿ անձնական համար տրամադրում է ընդունող հանձնաժողովը, կամ եթե դիմորդը մասնակցել է 2023 թվականի բուհերի առկա ընդունելության քննություններին, ապա կարող է օգտագործել այդ ժամանակահատվածում ԳԹԿ-ի կողմից տրված անձնական համարը:

Ընտրած մասնագիտությունների միասնական քննություններից դրական գնահատական(ներ) ունեցող դիմորդները կարող են մրցույթին ներկայացնել այդ գնահատական(ներ)ը կամ հանձնել նոր քննություններ: Այս դեպքում մրցույթում կօգտագործվեն ավելի բարձր գնահատականները:

Ընդունելության քննությունների վարձավճարից ազատվում են հեռակա ուսուցման ընդունելության կանոնների 41-43-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները:

Հեռակա ուսուցման ընդունելության դիմում-հայտերի ընդունումը ավարտվում է սեպտեմբերի 25-ին, ժամը 18:00-ին:

Ընդունելության քննությունները կանցկացվեն հոկտեմբերի 20-27-ը

Բուհ ընդունված դիմորդների ցուցակները կհաստատվեն մինչև հոկտեմբերի 30-ը:

**2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

1. **Ավարտական փաստաթուղթ (ատեստատ կամ դիպլոմ՝ միջուկի հետ),**

2**. 4 լուսանկար (3×4 սմ չափսի)** */ունենալ նաև էլեկտրոնայի տարբերակը/*

3. **Անձը հաստատող փաստաթուղթ** (անձնագիր, նույնականացման քարտ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական) /ներկայացվում է նաև փաստաղթղի պատճենը/:

4**. Զինվորական գրքույկ՝ առկայության դեպքում** (բնօրինակը և պատճենը, բնօրինակը վերադարձվում է՝ համապատասխանության ստուգումից հետո) **կամ զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունը անցնելու մասին** /ներկայացվում է նաև փաստաղթղի պատճենը/:

5. **2023թ. հեռակա ընդունելության կարգի կանոնների 41–43-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր** (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության 40 կամ ֆունկցիոնալության ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձինք (երեխաները)), առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ոստիկանության և ՀՀ ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքներ):

Միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները (առկայության դեպքում):

5. **«Գնահատման ֈ թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված միասնական քննությունների վկայագիր** (միասնական քննության դրական գնահատականը պահպանելու դեպքում):

6. **Առկա ուսուցման համակարգում սովորող անձինք հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու համար կարող են ներկայացնել միջնակարգ կրթության ատեստատի կրկնօրինակը**՝ այն բուհի նշագրումով և կնիքով, որտեղ գտնվում է բնօրինակը:

7. **Սահմանված կարգով պետության կողմից նպաստի ձյով ուսման վարձավճարի փոխհատուցում ստանալու համար (առկայության դեպքում) ընտանիքի**

**անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանք**, ՀՀ կառավարության՝ 2014թ. դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքներում հաշվառված և վերջին հինգ տարում մշտապես բնակվելու մասին տեղեկանք, մարտական գործողություններին մասնակցությունը հավաստող տեղեկանք, եթե զինվորական գրքույկում համապատասխան նշում առկա չէ:

**Վճարելու վերաբերյալ անդորրագիր: Դիմորդը դիմում-հայտ լրացնելուց հետո ԳԹԿ-ին է փոխանցում յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար ԳԹԿ-ի համապատասխան հաշվեհամարին /900018003401/ փոխանցված 1500 դրամ վճարի անդորրագրի էլեկտրոնային տարբերակը /Երկու քննության համար վճարվում է 3000 դրամ՝ անպայման դիմորդի անունով/,/պետք է ունենալ նաև վճարման կտրոնի էլեկտրոնայի տարբերակը:**